

չէն եկեղեցւոյն եւ յանդէն մնացելոց միաբանիցն, որք սրտատուոյն լեալ արտասուէին՝ մինչ տեսանէին զբաժանիլ իւրեանց ի յԱրբայէն:

ՓԱՆՈՒՍՏ Ի ՄԵԹՈՆԱՅ ՅԱՄԻՆ 1715

ԵՒ ԽՐԱՏՔ Ի ՆԱԶԱՐԷԹՆԿ

Արդ, արտասուած թոր աչօք բաժանեալ ի նոցունց՝ մտաք ի նաւ, ի յոր բազում վիշտոյ կրեալ՝ թէ՛ ի կողմանէ փառութեան նաւուն, թէ՛ ի կողմանէ դառն աղքատութեան, եւ յայոց վշտաց ճանապարհին, ամենեքեան էաք տրտում եւ տխուր ի մէջ նաւի, զոր տեսեալ բարեբարոյ Արբային մերոյ՝ քաջալերեալ մխիթարէր զմեզ: Արդ, յաւուր միում տեսեալ իմ զնա ի մեծի տրտմութեան, ասացի ցնա. Հա՛յր, տեսանեմ զքեզ կարի յոյժ տրտմեալ. դիտեմ զի մտածես թէ ո՛ր արդեօք գնալոց եմք, արդեօք ի Վենետիկ կարե՞մք գտանել զփոքրիկ տեղի մի բնակութեան, եւ կամ զօրոյստօրական ապրուստ: Եւ նա պատասխանի արար ինձ քաջալերելով զիս, եւ ասէ. Մեք սիրեցցուք զԱստուած, զպատուիրանս նորին պահեսցուք եւ ընկեցցուք զհոգս մեր ի նա, զի նա զթած եւ ողորմած է. նա որ դանասունս եւ զթրուռնս երկնից՝ որք ոչ ունին զհամբարանոցս՝ առատապէս կերակրէ, ո՛րքան եւս առաւել զերկրեղածս եւ դաստուածապաշտս եւ զկրօնաւորս՝ որք թողին դամեանայն վասն սիրոյ նորին՝ կերակրելոց է. ես ոչ երբեք տխրիմ չուրջ զայսպիսեօք, այլ միայն ի յԱստուած եմ յանձնեալ. նա այց արասցէ մեզ, զի ոչ թողու Աստուած ի ձեռաց զաստուածապաշտս իւր: Եթէ հարկն դայցէ՝ մուրանալով կարեմք ապրիլ ի Վենետիկ. անհոգ լեր, ե՛րթ եւ պարապեա՛ ի յուսմունս քո եւ աղօթեա՛ առ Տէր ջերմեռանդարար:

Եւ զարմանամ ես ի վերայ մեծի համբերութեան եւ երկայնատութեան եւ հաստատուն յուսոյն սորա որ առ Աստուած: Արդ, մինչ ժամանեցաք ի Նազարէթն, թէ ո՛րքան վիշտս կրեցաք ի դառն աղքատութեան,

թեհէ, զի պակասեալք էին փողքն եւ զոչինչ ունէաք՝ բաց ի սակաւ ինչ ալերց եւ իւղից, ոչ կարեմ ձառել: Զայս լուեալ ոմանց բարեպաշտից, որք բնակէին ի Վենետիկ, հաւաքեցին աստի եւ անտի զողորմութիւն պատարագի եւ նոքօք շատանայաք ի Նազարէթն: Արդ, մինչ մերձեցաւ եղբրումն Նազարէթին՝ սկսաւ գերյարգոյ Արբայայն մեր հրահանգել զմեզ հանձարեղ բանիւք՝ ասելով. Որդեա՛կք իմ, ահա ի մերձակայ աւուրս ելանեմք աստի եւ մտանեմք ի քաղաքն. ամենեքեան դուք պարտիք կեալ եւ չըջիլ անդ պարկեշտութեամբ եւ խոնարհութեամբ, միշտ ի խոնարհութեան ունելով զլուրսս ձեր, եւ ոչ հայիլ աստ եւ անդ. լերուք սակաւախօսք, հեղք, եւ հանգարտք, զի եղիցուք բարի օրինակք տեսանողացն ըզմեզ. զի մեք գոլով այլազգիք, եթէ սակաւ ինչ անհամեստութիւն ի մեզ տեսանիցեն, դայթակղին եւ լինիմք անհամբաւք առաջի մարդկանց, եւ ոչ լսեն խնդրութեամբ մերոց այնուհետեւ, եւ ոչ կարեմք ընդ երկար ժամանակս մնալ աստ: Դարձեալ ասեմ ձեզ՝ թէ ոչ պարտիմք հայիլ ընդ այնպիսի կարգաւորսն, որք ընդարձակաբար չըջին, պճնեցեալք խօսին եւ ծիծաղին, ընդարձակաբար դընան եւ նստին ուր եւ կամին, խօսին ընդ որոց կամին. զի նոքա են որդիք մեծատանց, զի ոմանք են թաղապետք եւ ոմանք իշխանապետք, եւ մտեալ են ի մենարանս բազմօք եկամտիւք: Վասն որոյ չէ դարմանալի թէ այնպէս չըջիցին նոքա, զի ոչ տան դայթակղութիւն ժողովրդեան. իսկ մեք գոլով աղքատապետք, եթէ այնպիսի չըջիցիմք, թարց կարծեաց՝ տամք դայթակղութիւն եւ համարին զմեզ խենչք եւ աղքատ հպարտ. այլ պարտիմք հայիլ ընդ այնպիսի կարգաւորս՝ որք են կանոնապահք, պարկեշտք, հեղք, խոնարհք, ցածաքին զգեստութեք զգեստաւորեալք, ոմանք բողոք եւ գլխիւրացք, եւ ոմանք լուսկացք, ոմանք պահեսցողք եւ ոմանք շատացողք սակաւութեք եւ ճշտողք մարմնոց եւ ախտից իւրեանց:

4. Նազարէթ (Lazzaretto vecchio), կղզի մը՝ ուր կը պահուէին, այդ ժամանակ, Արեւելքէն հասնողները, շուրջ 40 օր, տարափոխիկ հիւանդութիւններու (ժանտախտի) առջեւ առնելու համար: Այդ կղզին կը գտնուէր Ս. Ղազարի հարաւակողմը, շուրջ 400 մետր հեռաւորութեան վրայ, Լիտոյի մօտ: ԺԱ. եւ ԺԲ. դարերուն՝ եղած է վանք, ուր շինուած է նաեւ Նազարէթի Աստուածամօր նուիրուած եկեղեցի մը, որ մինչեւ 1249 թուականը կանգուն էր:

Թակղութիւն եւ համարին զմեզ խենչք եւ աղքատ հպարտ. այլ պարտիմք հայիլ ընդ այն կարգաւորս՝ որք են կանոնապահք, պարկեշտք, հեղք, խոնարհք, ցածաքին զգեստութեք զգեստաւորեալք, ոմանք բողոք եւ գլխիւրացք, եւ ոմանք լուսկացք, ոմանք պահեսցողք եւ ոմանք շատացողք սակաւութեք եւ ճշտողք մարմնոց եւ ախտից իւրեանց:

Արդ՝ զայսպիսի խրատս բազում անգամ տայր մեզ, դիտելով զվատթարութիւն բնութեան մարդկան, որ միշտ դիւրասահ է առ անկատարութիւնս, եւ զանկատար անձինս՝ առնող ինքեան զօրինակ. զի ոչ նայի յիւրն թէութիւն, եւ կամի հաւասարել զինքն այնց՝ որոց այլ է թէութիւնն. զի ոմանք վանորայք առատապէս կեան, զի ունին զառատ եկամուտս եւ են որդիք մեծատանց, որք մինչ էին յաշխարհի՝ կեային փափկաբար եւ ապրէին առատապէս. եւ ոչ են մեղադրելիք, զի հնազոյն զգեստքն յաղքատութեանէ կեալ կրօնաւորացն մեծ իմն է, քան թէ նոր և նուրբ՝ ի փարթամութեանէ կեալ կրօնաւորաց. զի աղքատքն զոչինչ թողին ի մտանել ի կրօն, իսկ փարթամքն զբաւաւ մտանել ի կրօն, իսկ փարթամքն զբաւաւ ինչս՝ զծառայս եւ զաղախնայս, զոսկեղիպակ զզգեստս, զիշխանութիւնս եւ զփառս թողին. վասն որոյ մեծ յիմարութիւն է նմանիլ նոցին, եւ մանաւանդ մեզ՝ որք եմք ի ցածագոյն յազգէ եւ ի նուաստ տանէ: Ուստի, պարտիմք շնորհակալ լինել զՏեառնէ, զի կամեցեալ է մեզ լինել ի նուաստ տոհմէ, որպէսզի ուսուցուք զխոնարհութիւն եւ միշտ ի խոնարհութեան մնայցեմք, եւ ոչ պանծայցեմք ազգատոհմիւք մերովք. զի որպէս գոն ոմանք խոտք, զորս եթէ մարդիկ ի կիր առնուցուն սակաւ առողջութեան՝ բուժին նոքօք, իսկ եթէ ճնճողութեան ուտիցեն՝ իսկոյն մեռանին, այսպէս եւս մեք եթէ հեռեկիցիմք այնպիսեացն՝ մեռանիմք:

Արդ՝ մինչ ելաք ի Նազարէթէ եւ եկեալ բնակեցաք ի տուն մի ի վարձու կալեալ, անդէն սկսաւ կարգաւորել՝ զի զոյգ զոյգ չըջեցուք ի քաղաքի, թէ՛ ի զնալն ի պատարագել եւ թէ ի յայլս գործս. եւ մինչ

եհաս ձմեռն ի վերայ, եւ ոչ ունելով մեր բաւական զգեստս, զվիշտս մեծամեծս կրեցաք ի ցրտութեանէ. եւ գերյարգոյ Արբայայն մեր եւ ոմանք ընդ նմա անկան ի տկարութիւն: Տես դու աստէն զմեծագոյն վիշտն Արբային՝ զոր համբերաբար տանէր. քանզի թողեալ էր զնորաչէն վանքն եւ զեկեղեցին, եւ դառն աղքատութեամբ տարաշխարհիկ, հիւանդ կայր ի մահճի. զոր լուեալ երջանիկ Պատրիարքին Վենեցիոյ⁵, առաքեաց առ մեզ ձագս հաւուց եւ զդրամս եւ մխիթարեաց զԱրբայն մեր ի ձեռն գրագրի իւրոյ: Եւ մինչ շնորհիւ Տեառն առողջացաւ, գնաց առ նա առ ի լինել շնորհակալ. եւ նորա տեսեալ զԱրբայն մեր եւ զգեղեցկութիւն իւր եւ զքաղցրաբարոյութիւն եւ զշնորհալի դէմսըն՝ կապեցաւ ի սէր նորա եւ ասաց. Որպէս վկայեալ էր արքեպիսկոպոսն Նէապոլսոն⁶, առաւել քան զայն տեսի: Սոյնպէս եւ Դուքսն⁷ եւ խորհրդականք նորին մինչ տեսին զԱրբայն մեր այնպիսի շնորհալի դիմօք՝ սքանչացան եւ ասացին. Զոր ինչ խնդրիցես ի մէնջ՝ յօժար սըրտիւ պատրաստ եմք ի կատարել. յիւրաքի բարի օրինակ եկիք մեզ աստ:

Ընդ ժամանակս ընդ այնոսիկ, եկն առ մեզ պատանի մի Կաֆայեցի առ ի լինել կրօնաւոր. զնա տեսեալ Արբային՝ յոյժ հաճեցաւ. եւ զկնի երկց աւուրց՝ տարաւ զնա ընդ իւր ի քաղաքն, առ ի շրջեցուցանել եւ յետոյ զգեցուցանել նմա զսեաւ զգեստ: Արդ՝ ի շրջելն մեր ի մէջ քաղաքին, ետես այլ ոմն Կաֆայեցի զնա եւ ասէ. Ընդէ՞ր եկեալ ես աստ: Եւ նա ասէ. Ի մտանել ի վանքն: Ասէ այրն ցրեցարգոյ Արբայն մեր. Թոյլ տուր սմա, զի յա-

5. Այդ շրջանին՝ Վենետիկի Պատրիարքն էր Պետրոս Պարպարիկոյ (1706-1725):

6. Կաֆայեցի Կորնթոսի Արքեպիսկ. Անճելոյ Մ. Քարլինի (1658-1715), որ յանձնարարական զեղեցիկ տողեր գրած էր, Մխիթարի եւ իր Միարանութեան մասին մեծ գնահատանք արտայայտելով (տե՛ս «Բագմ.» 1949, բացառիկ, Յուլիոս-Դեկտ. էջ 111):

7. Այդ օրերուն՝ Վենետիկի վրայ կ'ընթերցէր 111րդ Դուքսը, Giovanni Cornaro (1709-1722):

որում. «Յորժամ տկարանամ մարմնով, յայնժամ զօրանամ հոգևով»¹⁶: Զի Աստուած ցայնքան ժամանակս պահէ զմարմինն յառողջութեան, ցորքան հոգին կայ զօրացեալ եւ առողջ՝ առողջութեամբ մարմնոյն. իսկ յորժամ զօրանայ մարմինն առողջութեամբ իւրով եւ յառնէ ի վերայ հոգւոյն, յայնժամ Աստուած յառնելով ի վերայ մարմնոյն՝ ի ձեռն հիւանդութեան բառնայ զնա, որ է մահադեղ հոգւոյն, եւ մեծ պարգեւ է այս, զոր Աստուած սիրելեաց եւ որդւոց իւրոց պարգեւէ, ըստ որում. «Ի խրատու համբերութեան կայք, իբրեւ յորդիս մատուցեալ է ի ձեղ Աստուած»¹⁷: Զի բազումք հիւանդութեամբ արդարացան, բազումք եւս ի բաց կացին ի բազմադիմի մոլութեանց եւ յոյժ զգաստացան, բազումք եւս մեծագոյն սիրով եւ ըղձիւ մեծաւ ընդերկարեցին ըզհիւանդութիւնն՝ զիտելով զմեծ զօգտութիւնն նորին:

Հիւանդքն ոչ պարտին զարհուրիլ ի վշտաց հիւանդութեանց եւ փախնուլ յայնց, այլ պարտին նկատել ի նոսրն ըզբարին՝ զոր Աստուած զիտել տայ հիւանդին. զի որպէս դառն դեղն յօժարութեամբ առնու հիւանդն, ոչ նկատելով ի նմին զդառնութիւնն, այլ զբարին առողջութեան, այսպէս եւս հիւանդքն՝ զբարեհաճութիւնն Աստուծոյ եւ զառողջութիւնն հոգւոյն. ի յոր սակս առաքեալ է Աստուած զհիւանդութիւնն, զնոյնն պարտ է զիտել եւ սիրով վերնդռնիլ. զի այս մեծ մխիթարութիւն է որո՛ց եւ իցէ հիւանդաց, թէ ի բարւոյ կամացն Աստուծոյ եկեալքն՝ բարիք են. զայս նկատելով՝ ամենայն հիւանդութիւնք թուին առողջութիւն եւ օգտակարք: Զմէ՞ խընդրես, ո՛վ մարդ, զառողջութիւն. եթէ նովաւ վարիցիս չարակրարար՝ եղիցիս պատժապարտ. իսկ եթէ ասացես՝ վասն այն խնդրեմ զառողջութիւն, զի ջերմեռանդաբար ծառայիցեմ Աստուծոյ, ասեմ քեզ, առաւել ջերմեռանդաբար ծառայես Աստուծոյ եւ հաճոյական պատարագ մատուցանես նմա՝ մինչ զեկեալ հիւանդութիւնն սիրով ընդգրկեալ չնորհակալ լի-

նիցիս զնմանէ ասելով. Սակաւ է, Տէր, զայս զոր առաքեցեր ի վերայ իմ՝ բազմապէս անթիւ մեղաց իմոց, կամիս սակաւաւ ախտու վշտիւ ազատել զիս ի յաւիտենական դատապարտութենէ:

Դարձեալ ասաց Գերյարեկին մեր թէ հիւանդութիւնն մարդկանց պատճառի ի բազում պատճառաց. նախ՝ ի յայլայլութենէ խառնուածոյ բնութեանն, երկրորդ՝ վասն մեղաց. որպէս յայտ է ի հիւանդութեան Անտիոքայ, եւ ի փոխնիւհուոյ Վենեցիոյ, որ ոչ շատանայր հասարակ ջրով լուանալ զերեսս իւր, այլ ի ցօղոյ երկնից, որոյ կերակուրքն էին թանկագինք եւ իբրեւ թէ անդամներէր, նմանապէս ծիրանիքն եւ զգեստքն. որոյ սկտեղքն ոսկիք, դանակն եւ կեռն՝ ոսկեղէնք, ոտնամանքն մարդարտեօք, ակունքն որովք պճնիր՝ յոյժ թանկազինք. ում սակս իւրոյ յանդուր հպարտութեան՝ անկաւ յայնպիսի հիւանդութիւնս, մինչ զի եղեւ այնքան որդնալից եւ դարչահոտ՝ զի ոչ ոք ի յաղախնեացն կարէր մտանել առ նա ի տալ սակաւ ինչ հացեղէն խիւս: Երրորդ՝ վասն փառացն Աստուծոյ, որպէս յայտ է ի Ղազարոս եւ ի ծնէ կոյրն: Զորրորդ՝ վասն ոմանց մեղաց եւ վասն ըզդուլութեան ի հանապազորդական սահեցմանց եւ վասն մաքրելոյ զներելի մեղս, ժանդս, որպէս մաքուր հայելին՝ որ ծածկի ի քօղոյ, զի մի՛ ի փոշւոյ զպայծառութիւն իւր կորուսցէ:

Ասաց դարձեալ՝ թէ Տէրն մեր եւ բազումք ի սրբոց զանազան վշտիւք վշտացան. եւ այս նախ՝ վասն մեծի արդիւնաւորութեան իւրեանց, որպէս ասի զՔրիստոսէ. «Խոնարհեցոյց զանձն լեալ հնազանդ մահու չափ եւ մահու խաչի, վասն որոյ Աստուած զնա առաւել բարձրացոյց»¹⁸ եւ այլն: Եւ սուրբք կրելով զփիշտս, հասին անթառամ պսակաց: Երկրորդ՝ ի յօրինակ մեղ, ըստ Յակոբու. «Լուարուք

16. Բ. Կորնթ. ԺԲ. 10:

17. Եբր. ԺԲ. 7:

18. Փիլ. Բ. 8-9:

զհամբերութիւն Յովբայ, եւ զկատարումն Տեառն տեսէք¹⁹: Ի հիւանդութեան տըրտընջել ի Տեառնէ՝ է իբր հայհոյութիւն. որպէս տրտնջէն ընդդէմ բժշկին, որ դառն դեղօք կամ հատմամբ սրոյ զհիւանդութիւնն առողջացուցանել կամի, է մեծ նախատինք բժշկին: Երբեմն հիւանդութիւնն տայ Աստուած մեղ զի դադարեցուք ի հոգոց եւ պարապեցուք ի զննումն խղճի մտաց մերոց եւ ի կարգաւորումն վարուց մերոց եւ ի պարապումն ի սէրն Աստուծոյ եւ ի յառաջադիմումն առ բարեգոյնս, եւ ի յուսումն մեր՝ զի ուսցուք թէ ասականացւոյ մարմնոյ զայնքան մեծագոյն փոյթս ոչ ունիցիմք, այլ միայն զօր ըստ օրականէ. եւ այս այնքան՝ մինչ զի ապրիցի:

Դարձեալ ասաց. Հիւանդքն մինչ ի յառողջութեան իւրեանց ոչ ստացան զպտուղ համբերութեան, զոնէ ի հիւանդութեան պարտին ստանալ. զի մի՛ իբրեւ զանպիտան ի բաց հատանիցին ի Տեառնէ, զի Տէրն մեր երիցս անգամ եկեալ խնդրէ ի մէջ զպտուղ համբերութեան եւ բարեգործութեան. այսինքն՝ ի պատանեկութեան, յերիտասարդութեան եւ ի ծերութեան. եւ իբրեւ ոչ զտանէ, ասէ. «Կտըրեա՛ զդա, ընդէ՞ր եւ զերկիրդ խափանէ»²⁰: Պահապան հրեշտակն մեր աղերսէ զերեսս Տեառն ասելով. Թող բրեցից չուրջ զդուաւ. այսինքն՝ բարձից զհամբան, ըզփարթամութիւն, զյաջողութիւնս եւ զայլ լըս. եւ արկից զգովաւ զաղբ. այսինքն՝ զհիւանդութիւն եւ զայլս բազմադիմի վիտրութիւնս եւ զանհոգութիւնս. ապա թէ ոչ՝ հատցես զդա, այսինքն եթէ ի յայսպիսի փորձութիւնս ելով՝ ոչ տայցէ զպտուղ համբերութեան: Խափանելն զերկիր՝ է տալ զգայթակղութիւն ընկերաց վատթար վարուք իւրովք:

Համբերութիւն է պտուղ Հոգւոյն սրբոյ, եւ ով ոք յո եւ իցէ նեղութիւնս եթէ ընտրեցեալ գոյոյ, զի ունի զՀոգին սուրբ. իսկ իբրեւ ոչ՝ է կասկածելի փրկութիւն նորին: Համբերութիւնն համեմէ զամենայն զժուարթութիւնս:

ԵՐԿՐՈՐԴ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆ

ՄԽԻԹԱՐԱՅ ԱՌԲԱՅԻ ՅԱՄԻ ՏԵԱՌՆ 1746

Եւ արդ՝ յամի Տեառն 1746, ի Մայիսի տասին էառ Աբրայն մեր զմաքրողական դեղ, եւ յետոյ կամէր տալ հատանել դեռակ՝ ըստ իւրում սովորութեան. բայց դեղն մաքրողական ոչ ըստ օրինի արար զներգործութիւն եւ զդաց յինքեան զծանրութիւն ինչ. վասն որոյ ի հետեւեալ աւուրն կոչեցաք զբժիշկն, եւ իբրեւ չօշափեաց զգարկ բազկին, ասաց՝ թէ ունիս զջերմութիւն եւ կասկածիմ թէ կրելոց ես զմեծ իմն տկարութիւն. վասն որոյ չէ պարտ այժմ հանել զարիւն: Եւ իբրեւ եհաս քսաներորդ ժամն՝ կալաւ զնա սաստիկ ջերմութիւն. եւ այս մնաց իբրեւ զաւուրս...: Եւ զինի սորա՝ յաւուր միում՝ մինչ եկն բժիշկն, առաջադրեաց առնուլ զհինգ օնձայ նշի իւղ²¹, եւ այս առ ի մաքրել զստամոքսն եւ թեթեւացուցանել զջերմութիւն: Եւ զի թէպէտ Գերապատիւ Աբրայն մեր յոյժ կասկածէր ի յրմայելոյ զնշի իւղն, զի երբեմն մինչ առեալ էր զիւղն՝ սաստիկ զերկուսս ստամոքսի եւ կշտոյ կրեալ էր, սակայն բժիշկն յոյժ ստիպեաց ասելով՝ թէ զբազում զօգտակար ներգործութիւնս առնէ քեզ իւղն. եւ նա էառ՝ հնազանդեալ բանի բժշկին: Արդ՝ մինչ անցին վեց ժամ ի վերայ, կալան զնա սաստիկ երկունք կշտոյ եւ ստամոքսի. եւ այս այնքան՝ մինչ զի մեծածայն աղաղակէր եւ տակաւ առ տակաւ սաստկանայր, մինչ զի այնքան եղեւ՝ զի զրեթէ յամէնուստ ծակոտեաց մարմնոյն իբրեւ փոքրիկ առուաց հեղանէին քրրտունք, եւ յոյժ զալկացուցին զնա: Զայս տեսեալ՝ ասաց ցիւս, որ մերձ կայի առ նա. Յաւս այս մահացուցանէ զիս. վասն որոյ կամիմ առնել զխոտտովանութիւն: Եւ պատրաստեաց զինքն առ ի մահ. զոր

19. Յակոբ. Ե. 11:

20. Ղուկ. ԺԳ. 7 եւ յջ.:

21. Օնձայ (իտլ. oncia). մեղրական դրութեան ծաւալումէն առաջ, միջին դարերուն գործածուող ծանրաչափ մը, համապատասխան մեր այժմեան չուրջ 30 կրամին:

տեսեալ իմ՝ փութացուցի առ ի կոչել ըզրժիշկն. եկեալ բժիշկն՝ տեսեալ զնա ի յայն կացութեան, յոյժ ափսոսաց եւ հրամայեաց առնել զհոգնայ²² եւ ետ զգեղ ինչ եւ առժամայն դադարեցան երկունքն: Եւ մինչ ոմանք ի մէջ մեղադրեցին զբժիշկն սակա տալոյն զնշի իւզ, նոյնժամայն Գերապատիւ Արքայայրն մեր անմեղացուցանելով զբժիշկն՝ ասաց. Աստուած իմ թոյլ ետ ինձ ըմպել զնշի իւզ եւ կրել զանտանելի երկունս ստամոքսի եւ կշտոյ, եւ այս՝ սակա անթիւ մեղաց իմոց. ինձ պարտ է համբերաբար ընդգրկել զայն՝ զոր Աստուածն իմ ի յաւիտենից նախակարգեալ է: Ես բազմիցս վրիպեալ եմ ի պաշտօնի իմում, եւ ի պատիժ նոցունց՝ կարելի է թէ Աստուած վրիպեցոյց զբժիշկն առ ի տալ ինձ զնշի իւզ:

Արդ՝ իբրեւ առաւօտ եղեւ եւ եկն բրժիշկն առ ի այց առնել, ետես զի ունէր զծանր տկարութիւն, եւ սկսաւ քննել ըզպատճառն սաստիկ տկարութեան. եւ իբրեւ հայեցաւ ընդ երես նորին՝ յանկարծ ետես ի յաչս նորա զգեղնութիւն եւ ասաց. զայլ իմն նորադոյն ցաւ ի քեզ տեսանեմ, ո՛վ Գերապատիւ Արքայ, Տէր տացէ քեզ զհամբերութիւն եւ ինձ զլոյս առ ի բարեպէս դարմանել եւ շուտով զերծուցանել զքեզ յայսմանէ վտանգաւոր ցաւոց, զի ցաւս կոչի դալուկ եւ զգեղնացաւութիւն, որ է զժուարաւ բժշկելի. վասն որոյ ջանամ զի ի մէջ քառասնից աւուրց կամ այլ աւելի տալ զազդու գեղս եւ փարատել ըզհիւանդութիւնս զայս, եւ տէրութիւն քո պարտիս մնալ ի յանկոզնով յաւուրս յայսոսիկ: Եւ որքան բժիշկն յաճախէր զգեղորայսն, այնքան օր ըստ օրէ զայրանայր ցաւն ի գեղնութիւնն, մինչ զի սկսաւ գեղնիլ կերպարան իւր: Զայս տեսեալ բժշկին՝ ասաց ինձ եւ մերձակայ եղելոցն. պարտիք ամենեւին զգուշութեամբ զգուշանալ ի վշտացուցիչ եւ ի բարկութիւն շարժողաց բանից, թէ՛ դուք որք ծառայէք սմա, եւ թէ՛ այլ ոք՝ որ դայ առ սա. զի ցաւս այս միշտ յօժարեցուցանէ զուսուզն շարժիլ ի բարկութիւն, եւ ընդ բարկանալն՝ առաւել եռայ գեղին մաղձն, եւ

ի յեռանալն՝ ի դուրս պայթուցանէ եւ ի ստամոքս հեղու, եւ ի առատ հեղանիլն գեղին մաղձի ի մէջ ստամոքսի՝ պատճառէ զսաստիկ ցաւս եւ զերկունս անտանելիս:

Եւ այսպէս օր ըստ օրէ թէ՛ ի կողմանէ վշտաց, թէ՛ ի կողմանէ հոգոց հասարակութեան, եւ թէ՛ ի կողմանէ եղանակի սաստկութեան ջերմութեանն՝ սկսաւ սաստկանալ գեղնութիւնն, այնքան՝ մինչ զի ընդ բոլոր մարմինն տարածեցաւ: Զայս տեսեալ բժիշկին, կաղմեաց ի յոմանց խոտեղինաց զըմպելի ինչ, զոր առեալ Արքային՝ ոչ կարելով բարեպէս մարսել՝ կրէր զսակաւ ինչ ցաւս ստամոքսի. զոր տեսեալ բժիշկին՝ հրամայեաց բերել ըզջուր ջերմուկի, եւ յաւուրն ի յառաւօտու պահու զմի օխա ջուր ըմպել: Զոր առեալ Արքային մի անգամ եւ երկիցս՝ ոչ կարաց ըմպել, զի տայր մեծ վիշտ ստամոքսի. զոր տեսեալ բժիշկին՝ ետ զգոյլենտով²³ օշարակ, զոր առեալ Արքային՝ յետ ոմանց ժամուց սկսաւ կրել զմեծ ցաւ եւ զերկունս, եւ տեւեաց այս իբրու վեց ժամ եւ ասպա դադարեցաւ: Բայց սակայն ի յայտոսիկ աւուրս անդադար քրտունքն զտիւ եւ զրիշեր պատեալ պաշարեալ ունէր զինքն, այնքան մինչ զի յաւուրն երեցս կամ չորիցս փոխէր զգեղստան, նրմանապէս եւ ի գիշերի. եւ այնպէս թրթրեալ էին զգեղստան, մինչ զի ի քամելն զնոսին՝ ելանէին առատ ջուրք և անկողինն այնքան թացեալ լինէր՝ մինչ զի մինչ ի ներքս թափանցէր թացութիւնն. եւ միշտ երկու բարեպաշտ եւ երկիւղած եղբարք ի սպասու կային փոխաբերաբար: Եւ ես անպիտանս տեսանէի զայսոսիկ աչովք ի-

22. Հոգնայ կամ հոգնայ - թուրքերէն բառ, կը նշանակէ գրիխ կամ դեղ գրիլի (lavement, clystère, siringue à lavement. տե՛ս Բառգիրք երեքիւկուեան, տպ. Վիեննա, 1883):

23. Ռովեմս կամ ռավեմս - թուրքերէն բառ (աբարերէն՝ ռավանս), իսլ. rabarbaro, հայերէն՝ խաղիկ, խաւարծիլ, իշխառ, ըստ Պետեւեանի (տե՛ս Illustrated polyglotte Dictionary of Plant Names, տպ. Գահրէ, 1936, էջ 507, թ. 2958):

մովք եւ երբեմն օգնէի սպասաւորացն, եւ ոչ կամէր հեռանալն իմ յաչաց իւրոց, մանաւանդ ի ժամու երկանցն եւ ի սաստիկ ցաւոցն: Եւ այսպէս սակաւ առ սակաւ ցաւքն ստամոքսին, որ միշտ պատճառիւր ի յառաւօտութեան գեղին մաղձոյն՝ որ միշտ հեղանիւր ի ստամոքսն, կալաւ զկարգ իմն՝ զի ի յութեբորդ օրն միանգամ, կամ ի տասն օրն միանգամ, կամ յերկոտասան աւուրս միանգամ, կամ ի ութեւտասներորդ աւուրն կաշնոյր զսաստիկ ցաւ, այնքան՝ մինչ զի հեռակայքն զգոչումն եւ զաղաղակն նորին լսէին. եւ ցաւն տեւէր երբեմն մինչեւ ութ ժամ, երբեմն տասն եւ երբեմն երկոտասան ժամ: Վասն այսորիկ սկսաւ յոյժ նիհարիլ թէ՛ ի պատճառս առատ քրտանցն եւ թէ՛ ի պատճառս սաստիկ եւ անտանելի երկանցըն, եւ ի ասպ եւ անդ անդադար թաւալմանցն եւ ի անքուն լինելոյն ի բազում ժամս եւ ի բազում աւուրս. եւ զկնի իւրաքանչիւրոց երկանցն՝ դայր ի վերայ նորա սաստիկ ջերմութիւն:

Երբեմն նախ ցրտացուցանելով սկսանէր եւ երբեմն թարց ցրտութեան, եւ ջերմութիւնն տեւէր մինչեւ ցվեցերորդ ժամն եւ ինքն իբրու կիսամեռ անկեալ զնիւր յայնրս ժամանակս. եւ հեղով զառատ քրտունս՝ սակաւ առ սակաւ յուշն ի վերայ դայր եւ ասպ կարէր սակաւ ինչ զհացէ խիւս կամ զայլ իմն այսպիսի ճաշակել: Երբեմն ստամոքսն զոյով լցեալ գեղին մաղձովն՝ զկնի հնգից կամ վեցից ժամուց կերեալ կերակուրն պատճառէր ըզխոտուկ, այնպէս մինչ զի կամ պարտ էր փոխելով գերծանիլ եւ կամ հոգնայ տափսելով գերծանիլ եւ կամ հոգնայ տափսելով եւ կամ զայլ իմն ազդու գեղ ըմպելով, վասն որոյ միշտ կասկածանօք ուտէր զո եւ իցէ կերակուր:

Զայս տեսեալ միաբանիցն՝ անկան ի մեծ տրտմութիւն, ի հոգս եւ ի ցաւս. եւ մեծ տրտմութիւն, ի հոգս եւ ի ցաւս. եւ սկսան իւրաքանչիւրքն ջերմեռանդաբար սկսան իւրաքանչիւրքն ջերմեռանդաբար ազօթել առ Աստուած, ասելով զպսակն ասուրբ պատարաղին՝ ասելով զպսակն ամէնօր հնեցեալ Կուսին, միջնորդ արկանելով առ իւր Որդին միածին առ ի ողորմիլ եւ այց առնել Միաբանութեանս մերում՝

տալով զառողջութիւն Գերապատիւ Արքային մերոյ: Նաեւ բժշկին տեսեալ զանհնարին վիշտսն Արքային եւ զսաստկութիւնն ցաւոյն, յաւուր միում երբ յանուն Կուսին օրհնեցեալ զփշրանս հացի, եւ ասաց՝ թէ ծոմն բերանով սակաւ ինչ օրհնեցեալ ջրով ըմպեալ, ապաւինելով ի բարեխօսութիւն Կուսին: Եւ նորա առեալ զայնս փշրանս գերիս աւուրս՝ սկսաւ առողջանալ, եւ տեւեաց առողջութիւնս այս զբազում աւուրս:

Եւ ի յաւուրս յայտոսիկ սկսաւ ժողովել զցրուեալ դրամսն՝ որք մերձ կային առ այս ոք կամ առ այն ոք, եւ նոքա սիրով ետուն, զի ասէր՝ թէ դուցէ ես մեռանիցիմ: Եւ բազումք որք լուան զծանր հիւանդութիւն նորա՝ յոյժ ափսոսացին եւ եկին առ ի տես. եւ մինչ տեսին զկացութիւն նորա, յոյժ ցաւեցան եւ սկսան արտասուել: Եւ մինչ լու եղեւ հիւանդութիւնն ի Հոռոմ, բարեկամք եւ ծանօթք նորին յոյժ ափսոսացեալ էին, եւ բժշկապետն Հոռոմայու գրեալ էր զոմանս գեղորայս եւ ասացեալ էր՝ թէ, եթէ գերկունս սաստիկս կրել սկսանիցի, խորհրդով բժշկաց կարեն հատանել գերակ. եւ պատկերահան Յովհաննէս զնոյն գիրն առաքեաց առ մեզ, զի ինքն խնդրեալ էր ի բժշկն գրել զոմանս գեղորայս, բայց բրժիշկն մեր ոչ արկ ի կիր զայնս գեղորայս, զի յոյժ տօթ էր ժամանակն:

Արդ՝ իբրեւ եհաս Յուլիս ամիսն եւ արեղակն մերձեցաւ մտանել ի շնակ աստղն, որ է պատճառ յոյժ ջերմութեան, սկսաւ կրկին եռալ եւ վերառատանալ գեղին մաղձն եւ տայր սաստիկ երկունս, եւ զրեթէ օր ընդ մէջ կրէր զերկունս, եւ երբեմն ի միում աւուր երկիցս կամ երեցս վշտաղիւր յերկանցն. զոր տեսեալ բրժիշկին՝ ետ զփոշի ինչ մաքրողական, եւ այն արար բազում ներգործութիւնս, զի բազմիցս անգամ ետ փոխել եւ ետ լուծել, եւ փոխունքն էին սաստիկ գեղին. եւ այսու գեղովս նուազեցաւ գեղին մաղձն եւ զադարեցան երկունքն մինչեւ ցաւուրս ութ:

Եւ իբրեւ եհաս ութերորդ օրն՝ վերըս-

Թափ: Յետ կիսոյ ժամու սկսաւ վերստին աղաղակել եւ զոչել. դայս տեսեալ՝ ետու ըմպել զգեղ ինչ, եւ դեղն կարի սաստկացոյց զցաւն. եւ յետ միոյ ժամու եկն ի վերայ նորա սաստիկ ցրտութիւն, եւ ապա յետ երկուց ժամու՝ սաստիկ տաքութիւն. յետոյ արձակեցան քըրտունքն եւ այնպէս զերծաւ:

Արդ՝ դայսքան դառնակսկիծ եւ խստագոյն զերկունս կրելով, զհեղեղանման քըրտունս հեղլով եւ զսաստկազոյն աստիճանի զջերմութիւն կրելով՝ հիւժեցաւ բոլոր մարմինն, բարձաւ զեղ երեսաց նորին, աղիւնքն պայծառազոյն՝ զեղնութեամբ լցան, երեսքն կայտառք՝ եղեն իրբեւ մեռելոյ, բազուկք եւ ծունկք այնքան իւծեալք էին՝ մինչ զի տեսանէին իրբու փոքեր մանկան. բաց ի յոսկերաց, ի ջրաց եւ ի մորթոյ, այլ ինչ ոչ երեւիր. մորթն բոլոր թորչոմեցեալ էր եւ ինքն ի մահճի երեւիր իրբեւ զփոքրիկ մանուկ մի: Վասն որոյ որք դային ի յայցելութիւն եւ ի տես, յոյժ զարմանային ընդ նիհարումն նորա, եւ միաբանքն ամենեքեան մինչ տեսին զնա ի յայնպիսի կացութեան՝ ի վարանի եւ ի տրտմութեան կային, եւ զեղորայքն որք յաճախէին՝ այնքան զրեթէ սաստկանային ցաւքն օր ըստ օրէ:

Արդ՝ ի հինգերորդում աւուր Օգոստոսի, որ էր տօն հրաշից Կուսին, էառ Սըրբութիւն եւ հրամայեաց յետ երեկոյեան ժամուն ասել զլիթանիայն. այս տեւեաց իրբու ժամ մի. ի հետեւեալ աւուրն էառ զփշրանս հացի յանուն Կուսի օրհնեցելոյ: Իսկ ի յութեորդում աւուր եղաք զՍըրբութիւն ի բազմոցին զերիս աւուրս վասն առողջութեան Արքային եւ զոմանս պատարագս եւս մատուցաք: Իսկ ի հետեւեալ աւուրն, որ էր իննեորդ օրն, բերաք առ մեզ զբժշկապետն առ ի տալ զխորհուրդ: Իրբեւ ետեւ գիերյարդոյ Արքայն մեր եւ չօչափեաց զլեարդն եւ զորովայնն՝ առաց. Յերկուց իրաց է պատճառեալ ցաւս այս, այսինքն՝ ի յանդուլ աշխատանաց մտաց եւ ի հոգոց եւ կառավարութեանց ընտանեաց քոյ, այսինքն՝ Միաբանութեան. բայց առանձինն առաց մեզ՝ դժուարաւ

զերծանի յայտմանէ ցաւոյ, զի լեարդն եւ թոքն եւ որովայնն են կարծրացեալք: Յիրաւի նախադուշակեաց մեռանին Արքային, սակայն ինքն կանխապէս մեռաւ քան զԱրքայն, զի զրեթէ ամ եւ կէս եւ այլ աւելի եկաց առողջ: Բայց բժիշկն մեր լսելով զյուսահատական բանս մեծազոյն բժշկին՝ ոչ երբեք յուսահատեցաւ, այլ որքան կարն էր՝ զուն զործէր առ ի դարմանել եւ բուժել զցաւ:

Արդ՝ իրբեւ եհաս օրն Վերափոխման Կուսին, կամէր Արքայն առնուլ զՍըրբութիւն, բայց բժիշկն ոչ թոյլ ետ, այլ ասաց. Կամիմ զկանոն ինչ զնել տէրութեան քում, զի աստի մինչեւ ցըառասնեորդ օրն զոչինչ պարտիս ճաշակել, ոչ հաց, ոչ զմիս եւ ոչ զայլ ինչ կերակուր, այլ միայն յաւուրն երիցս անդամ ըմպել զարդանակս հաւեղինաց: Եւ յայնմ զիշերի կալաւ զինքն սաստիկ ցաւ. ուստի ի հետեւեալ աւուրն սկսաւ տալ ըմպել զգեղ ինչ յառաւօտուն, եւ զայլ իմն զեղ յերեկոյին, եւ այսպէս արար մինչեւ լցան քառասուն աւուրքն: Եւ յաւուրսս յայտոսիկ բազմիցս բազում անգամ կանխոյր զնա երկունքն: Եւ ի տօնի Վերափոխման եղաք զսրբութիւն ի բազմոցի եւ ամենեքեան պատարագեցին վասն առողջութեան Արքային. ի հետեւեալ աւուրն եւ ի միւս աւուրն եւս եղաք զՍրբութիւն:

Ի 24 օրն Սեպտեմբերի՝ յորում աւուր լցաւ քառասուն օրն՝ եկեր զկերակուր: Ի քսաներորդ վեցերորդ օրն Սեպտեմբերի՝ ետ մետասան անձանց զիշխանութիւն վարդապետական, եւ ինքն սկսաւ «Զքեղ Աստուած զովարանեմ»ն ի ծունկս անկեալ առաջի սրբադանի բեմի, եւ յայնմ աւուր յոյժ ուրախացաւ՝ զի կատարեցաւ բազմանքն իւր, որում ի վաղուց հետէ տենչայր²⁶:

Եւ յերեսներորդ աւուրն, որ էր տօն սրբոյն Հերոնիմոսի, արար զպատարագ.

26. Այդ տասնմէկ վարդապետներու թիւէն էին Հ. Ստեփանոս Մելիզոնեան (Միաբանի յաջորդող Արքահայրը), Հ. Մկրտիչ Անանեան, Հ. Իզնատիոս Խաչատուրեան, Հ. Վրթանէս Ասկէրեան եւն. . . :

իսկ յառաջնում աւուր Հոկտեմբերի, ըզկնի պատարագին՝ ըմպեաց զցուքուր²⁷. եւ զինի միոյ ժամու կալաւ զնա սաստիկ երկունք, եւ զինի ոմանց աւուրց վերստին կալաւ զնա երկունքն: Զայս տեսեալ բրժշկին՝ արդել զնա եւ յուտելոյ զկերակուր, այլ ասաց շատանալ արդանակօք. եւ արար այնպէս մինչեւ յաւուրս քսան եւ այլ աւելի: Յետ որոյ ետ նմա զմաքրողական զեղ եւ ետ հատանել զերակ եւ եւ զեւ յոյժ օդուտ, զի առ ժամանակ ինչ զադարեցաւ երկունքն եւ փարատեցաւ զեղնութիւնն: Վասն որոյ համարձակեալ բժշկին՝ յետ երկուց ամսոց վերստին ետ հատանել զերակ, եւ մինչեւ ցօր Ծննդեան ոչ զպաց զցաւ ինչ. բայց ի զիշերի Ծննդեան զպաց սակաւ ինչ ցաւ, եւ այսպէս օր ըստ օրէ նուազելու ցաւն: Իսկ եթէ երբեմն զայցէր ցաւն՝ էր յոյժ թեթեւագոյն. եւ այս տեւեաց մինչ ի յուրբաթ օրն բարեկենդանի (1747): Ի նմին աւուր եկն այնքան սաստիկ ցաւ, մինչ զի տեւեաց 24 ժամ, եւ այս եղեւ վերջինն սաստիկ երկանցն, զի յետ այսր աւուր երբեմն երբեմն միայն չօչափելով անցանէր:

ՀԻՒԱՆԳԱԳԻՆ ԱՒՈՒՐԻ ՅԱՄՍՆ 1747 ԵՒ 1748

Ուստի՝ մինչ եկն զարունն, բժիշկն ըստիպմամբ յորդորեաց զնալ ի զիւղն առ ի փոխել զօդն, եւ ասաց՝ եթէ սաստիկ երկունք ինչ զզայցես անդէն, ես վաղվաղակի հասանեմ անդ եւ զարմանեմ զքեզ, զի դու իրբու ամիսս եօթն ի բանտի կացեր, զի արարեր դու քեզ բանտանման խուղ ի մէջ սենեկի քո, եւ անդէն զայնքան վիշտս ցաւոց կրեցեր. եւ այժմ պարտ է քեզ ելանել ի դաշտս, եւ ի խոտաւէտ տեղիս, զի ընդարձակեցի սիրտ քո եւ զուարճացին զգայարանք քոյք: Յիրաւի այսպէս եղեւ. զի մինչ ելեալ ի նաւակէն եւ չընցաւ ի վերայ մարդագետին դաշեւ չընցաւ ի վերայ մարդագետին դաշտի՝ առաց ցիս. Գիտեմ թէ նոր փոփոխումն եղեւ ինձ, զի զուարճացաւ յոյժ սիրտն իմ՝ մինչ տեսի զգեղ զալարոյ: Եւ եկաց անդէն աւելի քան զերեսուն աւուրս եւ ոչ երբեք զպաց երկունս:

Եւ իրբեւ վերադարձաւ ի վանքն՝ կայր բարեպէս, զի յամենայնում աւուր ատնոյր կէս մսխալ ուովնտ սակաւ ինչ գալրանոսով²⁸, զի այսպէս դտաք զրեալ ի մեռում բժշկարանի զրքոջ: Եւ բժշկին հաւանեալ ընդ այս՝ ետ ուտել զուովնտ եւ այս առումն ուովնտին սկսեալ ի Դեկտեմբեր ամսոյն եւ մնաց մինչ ցլետին հիւանդութիւնն. եւ արար զօդուտ յոյժ, զի պահէր զնա յերկանց եւ միշտ զժողովեալ վատթար հիւթսն ի բաց հանէր յորովայնէն, եւ ի մաքրութեան պահէր զորովայնէն, եւ լեարդն՝ ի յառողջութեան:

Եւ սկսաւ այնուհետեւ պարապել ի սրբազրութիւնս բառքերին, ի ջերմեռանդութիւն եւ ի շարադրել զոմանս խրատական բանս, զպատուիրանագիրս եւ զիւր կտակն եւ զայս հոգեւոր վարդապետութիւնս, եւ ի սրբազրութիւնս յինքնէ շարադրեցելոյ մեկնութեան Սաղմոսին: Եւ եղեալ էր յինքեան զսահման՝ զի յաւուրն ընթեռնուցոյր զ25 թուղթս Թովմայի Գեմբաւոյն. եւ զայս անվրէպ կատարէր ի յամենայնում աւուր: Իսկ եթէ տկարութիւն ինչ հանդիպեցէր՝ այլոց տայր ընթեռնուլ եւ ինքն միտ դնէր բանիցն. եւ այս տեւեաց մինչեւ ի յետին հիւանդութիւնն, որ զորով ի մահճի՝ տայր ընթեռնուլ այլոց եւ ինքն ունկն դնէր: Նաեւ զաստուածային ժամերգութիւնն միշտ կատարէր՝ որքան կարէր:

Արդ՝ մինչ ետես զինքն կարի նիհարացեալ ի սակա ժուժկալութեան կերակրոց եւ երկունքն երբեմն երբեմն նեղէին զինքն, կոչեաց առ ինքն զամենայն միաբանս սըն եւ ետ նոցա զօրհնութիւն իւրաքանչիւրոյն, ըստ իւրոց կացութեանցն եւ թէութեանցն, զի ինքն յոյժ կասկածէր ի մեռանելոյ եւ ասաց. Յամենայն սրտէ սիրեցէք, որդեակք իմ, զԱստուած եւ ըզպատուիրանս նորա պահեցէք, զի զԱստուած միշտ ընդ ձեզ ունիցիք. հաստա-

27. Յուգոլաք - այսինքն՝ cioccolata, chocolat:
28. Մսխալ (թուրքերէն) ծանրութեան փոքր չափ մը: Իսկ գալրանոսը կամ քաղքան, որ եւ ամբուժատ, Galbanum, սաստկահոտ խէժ մըն է: Ռեկվեմլին համար տե՛ս ծանօթ. թ. 23:

եւ ասացի ցնա. Արդեօք ճանաչես թէ ո՞վ իցեմ ես. նա զոչինչ պատասխանի ետ ինձ. եւ ես կալայ զձեռս նորա եւ համբուրեցի զնա եւ յորդորեցի զայլս որք անդր կային՝ առ ի համբուրել զձեռս նորա. եւ արարին այնպէս: Եւ սկսայ աղաղակել ընդ ականջս նորա. Յիսուս, Մարիամ. եւ նա սակաւ ինչ զգաց. եւ ասացի ցնա. Տո՛ւր ինձ նշան ինչ՝ զի տաց քեզ վերջին արձակումն. զոր լուեալ՝ եհար զձեռն իմ ձեռամբ իւրով. եւ ես ետու նմա զարձակումն. եւ առեալ զխաչելութիւնն եւ ըզպատկերն Կուսին՝ մերձեցուցի ի բերան նորա, եւ նա ողջադուրելով եւ մեծաւ փափաքանօք համբուրեաց զնոսին: Ես ասացի եղբօր միում. Տո՛ւր այն ինչ ըմպելի. եւ նա ետ ըմպել նմա, եւ ինքն յօժարութեամբ ըմպեաց. եւ յետոյ սակաւ առ սակաւ սաստիկ ծանրացաւ եւ մերձեցաւ ի աւանդումն: Զայս տեսեալ փութացուցի զոմն կարգաւոր առ ի զնալ ի պատարագել վասն հոգեվարութեան Գերյարդեցելոյ Աբբասօր մերոյ, որպէսզի բարեպէս, քաղցրութեամբ եւ խաղաղութեամբ աւանդեսցէ զհոգի իւր ի ձեռս Քրիստոսի: Եւ պատուիրեցի քահանային նախ զարթուցանել զձերագոյն վարդապետան եւ ասել ցնոսա՝ թէ Գերյարդեցելոյ Աբբասայրն մեր է ի վերջին հոգեվարութեան. եւ նոքա ելեալ եկին եւ մերձ կային առ նմա: Իբրեւ պատարագիչն ասաց զպատարագն եւ զարձաւ ի յետս, սակաւ ինչ էանց ի վերայ, եւ սկսաւ դողալ եւ հառաչել. յետ միոյ պահու վերստին դողաց եւ սակաւ ինչ կրճտեալ զատամուկն իւր եւ սաստիկ երաց զերկոսին աչսն, եւ առժամայն փրչեաց զհոգին իւր:

Արդ՝ ի յաւանդելն զառաքինութեամբ զարդարեալ հոգին ի ձեռս Քրիստոսի, վերապատուելի Նիկիա վարդապետն³⁹ երկիցս անգամ ետ զարձակումն՝ նախ քան զբաժանումն հոգւոյն ի մարմնոյ, եւ ոմն ընթեռնոյր զյանձնարարական աղօթքն հոգւոյն առ Աստուած. ոմանք ողբային, ոմանք աղբերսէին առ Կոյսն Մարիամ՝ առ ի օգնել հոգւոյն նորին, եւ առ սուրբ Միքայէլ հրեշտակապետն՝ առ ի պաշտպանել

զնա ի թելադրութենէ բանասրկուին եւ յարբանեկաց նորին. ոմանք սկսան մերկացուցանել զնա եւ զգեստաւորել մաքուր զգեստիւք. ոմանք ասէին զԼիթանիայն մեռելոց:

Արդ՝ յորժամ ամփոփեցաւ լուսատու արեղակն Միաբանութեանս մերոյ, քաղցրաբարոյ Հայրն մեր, մեղրածորան վարդապետն ամենեցուն, սահմանողն նորոյս կարգի կրօնի, յանձանձիւն եւ հրահանգելն մերոյս խմբի, կանոնադիրն եւ կառավարիչն, հովիւն եւ բարոնապետն եւ մխիթարն ամենեցուն՝ եթող անմխիթար եւ խաւարաւ տրտմութեան ելից զսիրտս իւրայնոցս ամենեցուն: Վասն որոյ զասքն ծերագոյն վարդապետաց թախձեալ սրբտիւք ողբային զԱբբայն, որ էր լուսատու ինքեանց. երամ նոր վարդապետաց տրտմատոցոր սրտիւք արտասուէին զԱբբայն, որ էր բարոնապետ ինքեանց. ջուղ նոր ընծայ քահանայից բեկեալ սրտիւք լային զԱբբայն՝ որ էր հայր եւ սնուցիչ ինքեանց. հոյլք աշխատաւոր եղբարց եւ ժողով նորընծայից տրտմութեամբ միգապատեցեալք եւ սղաղկեաց լեալք, ոմանք յայս ինչ անկեան եւ ոմանք յայն ինչ անկեան կացեալ եւ ոմանք ի վարանի եղեալք, շրջելով, աղիողորմ հեկեկալով հեղուին զարտասուս ի վերայ Գերապատիւ Աբբային իւրեանց, որ ըստ իւր անուան էր մխիթար ամենեցունց եւ սնուցիչ եւ տածիչ, հրահանգիչ եւ լուսաւորիչ առ կեանն երանական:

Արդ, մի ոմն ի մերայնոց վարդապետաց զնացելոցն ի քարոզութիւն, իբր ամսօրեայ ճանապարհ հեռի ի մենաստանէ մերմէ, տեսանէ ի յանուրջս զմեռանիւն Աբբային յայնմ գիշերի եւ յայնմիկ ժամու՝ յորում աւանդեաց Գերյարդոյ Աբբայն մեր զհոգին իւր ի ձեռս Աստուծոյ. եւ ընդ տեսանելն՝ ողբազին ձայնիւ աղա-

39. Հ. Նիկիա վրդ. որդի Մարտիրոսի, Կ. Պոլսեցի (1665-1758), որ արդէն իսկ վարդապետ էր՝ Մխիթար Աբբասօր աշակերտած ատեն (1700). յետագային նկատուած է «աջ եւ բազում Մխիթարայ Աբբայի եւ երկրորդ սիւն հաստատութեան Միաբանութեան»:

ղակէ ասելով. Գերյարդելի Աբբասայրն մեր վախճանեցաւ, յիրաւի ասեմ, վախճանեցաւ: Զայս լուեալ շրջակայ եղելոց՝ համարին ցնորք ինչ տեսանել. նա պնդէ զրան իւր եւ ասէ. յիրաւի մեռաւ, զի ինձ աղղ եղեւ մահն նորին:

Արդ՝ յետ աւանդելոյն զհոգին՝ իբրեւ զվարդ կարմրերիւեան փայլեցան երեսք նորին, որ ի հիւանդութեան էին անչքեղացեալք, իւծացեալք եւ դեղնացեալք, իւծաքան՝ մինչ զի տեսանողքն յոյժ եւ այս այնքան՝ մինչ զի տեսանողքն յոյժ սքանչանային ընդ այն: Եւ մինչ մաքուր զգեստուք զգեստաւորեցին՝ առժամայն հանին ի յարտաքին ի մեծ խուզն եւ եղին ի վերայ բարձրաւանդակի տեղւոյ, եւ տուն ի ձեռս նորա զխաչելութիւն մի եւ ընդ սնարս նորա վառեցին զկերոն մի մեծ, եղին զօրհնեալ ջուրն. եւ ոմանք սաղմոսիւք եւ այլովք աղօթիւք պահէին զնա յաջորդաբար՝ ժամէ ի ժամ: Ոմանք ի ծանօթիցն, իբրեւ լուան թէ մեռաւ, եւ կեալ աղօթէին ի վերայ նորա, ոմանք արկեալ աղօթէին ի վերայ նորա, ոմանք տասուելով եւ ոմանք թախձեալ սրտիւ տասուելով եւ մարմինն նորա մնաց ի խղոջն մինչեւ յերեկոյեան ժամն:

Իսկ իբրեւ եղերեցաւ երեկոյեան ժամն՝ եկին բազումք, այսինքն երկու արքեպիսկոպոսոնք եւ իւր քահանայք եւ փոխանորդ քահանայն ժողովրդապետի Լիտոնոյ, աշխարհականք, արք եւ կանայք յոյժ բազումք: Արդ՝ իբրեւ կամեցան տանել զնա յեկեղեցին, ութ կղերիկոսք զգեցան զվերնաշապիկ, ունելով ի ձեռս իւրեանց զմեծամեծ կերոնս լուցեցեալս, նմանապէս եւ բոլոր ժողովուրդքն՝ բաց ի կանայն, ունելով ի ձեռս իւրեանց լուցեցեալ նանց, թափօր առեալ հանին զմարմոմեղէն, թափօր առեալ հանին երգօք: Եւ իբրեւ մինն ի խղէն հանդերձ երգօք: Եւ իբրեւ մէջ մեծ դահլիճին հասին՝ արարին ըզմերձ վերին սանդխոյ եւ անդ արարին ըզհոգեհանգիստ. եւ իբրեւ իջուցին ի վայր հոգեհանգիստ. եւ իբրեւ քալանային⁴⁰, և գնացեալ հասին ի դուռն քալանային⁴⁰, անդ արարին զհոգեհանգիստ: Անտի բարձրաւանդակի վրայ ի կէսն մեծ դահլիճին՝ ձեալ մինչ հասին ի կէսն մեծ դահլիճին՝ անդ արարին զհոգեհանգիստ, եւ անտի բարձեալ բերին ի դուռն եկեղեցւոյ, եւ

անդ արարին հանդիսապէս զհոգեհանգիստ. եւ անտի բարձեալ մուծին յեկեղեցի, եւ եղին ի բարձրավանդակ տեղւոյն, զոր նախապէս կերտեալք էին եւ սեաւ զգեստիւք զարդարեալ, եւ զբազումս մոմեղէնս լուցեալք, եւ սկսան կատարել զպաշտօն յոյժ հանդիսապէս ընթեռնով զգիրս, զաւետարանս, զաղօթսն, զմաղթանսն, նաեւ զբազում գութն զայս սաղմոսաց եւ շարականս: Եւ իբրեւ կատարեցին՝ իւրաքանչիւրքն գնացին ի տեղիս իւրեանց. եւ յայնմ գիշերի երեք անձինք ժամէ ի ժամ կային մերձ առ նմա եւ աղօթէին եւ սաղմոսէին:

Արդ իբրեւ առաւօտ եղեւ՝ եկին բազումք, թէ՛ ի Հայոց եւ թէ՛ ի լատինացւոց, եւ աղօթէին առ Տէր վասն նորա եւ մխիթարէին զմեզ. եւ արարաք հանդիսաւոր զճանաւոր պատարագ վասն հոգւոյ Գերյարդեցելոյն մերոյ, եւ միաբանքն թէ՛ յառաջնում եւ թէ՛ յերկրորդ աւուր վասն նորա պատարագեցին, նաեւ յայլ աւուրս՝ մինչեւ ցբառասներորդ օրն աչին ոմանք վասն հոգւոյն նորին: Եւ զկնի պատարագին՝ կատարեցաք հանդիսապէս զպաշտօն ննջեցելոց. եւ եկն ժողովրդապետ քահանայն Լիտոյին, հանդերձ բազում ժողովրդեամբ, եւ ասաց զպատարագ վասն հոգւոյ Գերյարդոյ Աբբային մերոյ:

Արդ, իբրեւ եղերեցաւ երեկոյեան ժամն, վերստին եկին բազումք ժողովուրդք, արք եւ կանայք, նաեւ հայ քահանայք եւ աշխարհականք, եւ սկսաք կատարել հանդիսապէս զկարգ թաղմանն՝ ընթերցմամբ զրոց, աւետարանաց, սաղմոսից, շարականաց եւ աղօթից: Իբրեւ մոսից, շարականաց եւ աղօթից՝ Իբրեւ կատարեցան սոբին, բարձին զմարմինն ի բարձրաւանդակէն անտի, իջուցեալ եղին

40. Քավանայ (Cavana), իտլ. բառ. նաւարան: Վանքի մուտքին աջակողմը, գետնայարկի չէքին մէջ կ'երկարէր մեծ եւ ընդարձակ նաւարանը, ուր կը պահուէին վանքին նաւակները, վեներիկի եւ Լիտոյի հետ հաղորդակցութեան միակ միջոցները: Այժմ սենեակի վերածուած է. կը մնայ կամարածեւ արտավին մեծ դուռը: Ներքին ուրիշ դուռով մըն ալ կը միանար վանքի քառանկիւն գաւիթին. խօսքը այս դուռին մասին է:

առաջի սրբազնասուրբ սեղանոյն եւ ողբերգական ճայնիւ սկսան ի դիմաց Գերյարդոյ Աբբային առնել զբարեաւ մնայ ընդ եկեղեցւոյն, ընդ միաբանից, ընդ օտար քահանայից եւ ընդ ժողովուրդեան. եւ անտի բարձեալ մուծին ի ներքս ի դասն, յետ կոյս աւազ խորանին, ուր էր նախապատրաստեցեալ յինքենէ գերեզման իւր, եւ անդ սկսան օրհնել զհոգն, եւ զայլս զընթերցուածս եւ զաւետարանս ընթեռնուլ, եւ զպատուական մարմին նորա հանեալ ի դադաղէն եղին ի մէջ տապանակի: Եւ նախ քան զնեղն զնա ի տապանի՝ խաչանիչ ցանեալ զօրհնեալ հոգն ի վերայ, սկսան ասել Փառք ի բարձունս, եւ բեւեռեցին բեւեռօք զտապանակն, եւ այնպէս եղին ի դիր հանգստեան, եւ զվէմն եղին ի վերայ գերեզմանին:

Արդ, մահն Գերյարդելոյ Աբբային մերոյ եղեւ յամին 1749, Ապրիլի 27ին, ի յեօթներորդում ժամու գիշերոյ. եւ էր ինքն ամաց եօթանասուն եւ չորից, աւելի երկու ամօք եւ ոմամք աւուրք: Յետին հիւանդութիւնն դառնակսկիծ եւ սոսկալի, յորում եկաց միշտ ի մահճի, եղեւ ըստ թուոյ ամաց իւրոց. քանզի եկաց յայնմ հիւանդութեան եօթանասուն եւ չորս աւուրս: Եւ հաւատամ թէ զբաւարանն աստէն քաշեաց, քանզի մեծաւ ջերմեռանդութեամբ եւ յոյժ համբերութեամբ համակերպեաց զկամս իւր ընդ կամացն Աստուծոյ ի հիւանդութեան. զի ոչ երբեք տրտնջեաց եւ ոչ նշան տփուհանաց եցոյց, այլ բնան իրբու ի ձեռանէ

Աստուծոյ եկեալ վերընկալնոյր զնոսին, եւ ըմպէր ուրախութեամբ զմատուցեալ բաժակն ինքեան ի Տեառնէ իւրմէ:

Արդ, աւուրս ութ արարաք զայդող, նմանապէս ի հնդետասաներորդի աւուր եւ ի քառասներորդի աւուր, եւ միշտ պատարազողն յիշատակէին զնա ի մէջ պատարազին: Արդ, ընդ հանդիսաւոր թաղումն Գերյարդոյ Աբբային մերոյ ոչ միայն այնք՝ որք ներկայ դասն ի թաղումն նորա, այլ եւ բնաւ լսողքն զայնպիսի հանդիսաւոր թաղումն արարեալ ի մէջն, յոյժ սքանչացեալք էին եւ ասացեալք էին. Բարուք փոխանակ տրիտուր տեառն իւրեանց Աբբային աշակերտքն իւրեանց տուեալք են՝ առնելով նմա զմեծայարգ եւ հանդիսական թաղումն: Սարգիս արքեպիսկոպոսն Կեսարիոյ ափսոսացեալ է ընդ թաղումն իւրոյ վարդապետին, որ էր Պատրիարք Կոստանդնուպոլսոյ եւ ասացեալ՝ թէ գրեթէ տասներորդ մասն հանդիսութեանս այսորիկ ոչ արարաք մեք որդիքս վարդապետին մերոյ եւ պատրիարքի, եւ ոչ այնքան բազմութիւնք ժողովրդեան շարժեցան առնել զհանդիսաւոր թաղումն Պատրիարքին իւրեանց. սոքա զերախտիս Հօրն իւրեանց միշտ ի միտս իւրեանց ունելով՝ արարին զայսպիսի հանդիսաւոր թաղումն, որ է մեծի նշան սիրոյ եւ հաւատարմութեան՝ որ առ նմա. եւ յիրաւի է, արդարութիւնն իսկ պահանջէր առնել զայսպիսի թաղումն, այնպիսոյ իմաստնոյ հանճարեղի բարունապետի եւ նախնոյ մեծի Աբբային:

ՅԻՇԱՏԱԿԻ ԽՈՂԵՐ

ՀԱՅՈՑ ԿՂԶԻԻՆ 250ԱՄԵԱԿԸ

(1717 - 1967)

Է.

Ս. ՂԱԶԱՐԻ ԵՐՐՈՐԴ ԸՆԴԱՐՁԱԿՈՒՄԸ

(1946-1966)

Համաշխարհային պատերազմի աւարտին (1945), մինչ կը դադրէր որոտն ահա թնդանօթներուն եւ ահարկու ոռմբերուն, եւ յաղթական աղբեր՝ դրաւուած հողամասերը կը բաժնէին իրարու մէջ, նոր սահմաններ դժելով երկիրներու, Ս. Ղազար եւս կը տիրանար նոր հողերու՝ ընդարձակելով իր սահմանները:

Յաղթանակի մեծ տօն կը կատարուէր Հայոց Կղզիին մէջ ալ. եւ աղբերն այնքան չէին հրճուեր՝ իրենց հայրենի երկրին սահմաններուն ընդարձակումով, որքան Միւրթար Աբբայօր որդիները՝ իրենց փոքրիկ կղզեակին հողերուն կըրկնապատկումով:

Միւրթարեան հայրենիքը, պանդխտութեան մէջ ստեղծուած փոքրիկ Հայաստանը կը մեծնա՛ր...: Սակայն՝ առանց սուրի եւ թնդանօթի:

Գաղափարի ու մշակոյթի յաղթանակն էր՝ որ ձեռք կը բերուէր, իտալական կառավարութեան ու մանաւանդ վենետիկի քաղաքական իշխանութիւններու ազնիւ բարեացակամութեամբ:

Արդարեւ, կէս դարէ ի վեր, Ս. Ղազարի Հայրերը ջանքեր կը թափէին ընդարձակելու համար կղզին. եւ այդ՝ ոչ թէ լոկ բոլս մը աւելի հող ունենալու տենչով, նիւթական շարժումի դիւրութեան համար, կամ վանքի որմերէն հեռացնելու համար համայնաքանդ խոնա-

ւութիւնը լճակի աղի ջուրերուն, այլ զուտ մշակութային նպատակներով:

Տարիները կը սահէին, եւ Միւրթար Աբբայօր կղզեակը, հակառակ 1815ի ընդարձակումին, օրէ օր աւելի կը նեղնար՝ կարծէք: Հայրենիքէն եւ փիւռքէն հասնող պարբերաթերթեր եւ օրագիրներ, ամէն տեսակ հրատարակութիւններ ու գիրքեր, ձեռագիրներ եւ մըշակութային այլ գանձեր ու գոհարներ, հին դրամներ, մետաղներ, արժէքաւոր նկարներ եւն... կը դիզուէին, կը գրաւէին մինչեւ անգամ վանականներու խրցիկները: Ս. Ղազարի շէնքերը նեղ կու գային՝ այդ բոլորը արժանաւոր կերպով ու վայելչաբար դասաւորելու, ցուցադրելու համար տասնեակ հազարաւոր ամէնազգի այցելուներուն, որոնք խուռնեամ կ'ողջունէին Հայոց Կղզին՝ ամէն տարի:

Եւ ահա՛ պահանջը ընդարձակուելու:

1945 թուականի աշնան, երբ՝ զինադադարի առիթով՝ համօրէն հասարակութիւնը Ս. Ղազար վերադարձած էր, կը սկսին առաջին շփումները պետական իշխանութիւններու հետ, ուսումնասիրելու համար ընդարձակումի մը հնարաւորութիւնը:

Բայց, ինչպէս Միւրթարի օրերուն - եւ պատմութիւնը յաճախ կը կրկնուի - Միաբանութեան կողմէ կատարուած առաջին